Հավելված 6
ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01 *ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք.Ճամբարակ «19» փետրվար 2020 թ.

Ճամբարակի ԱԿ ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Մելքումյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Գլոբմեդ ՍՊԸ-Ն, ի դեմս տնօրեն Վ. Մատենցյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

*լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ____ օրից ավելի,

2.1.8 Ընտրել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 348300 ՀՀ դրամ, /երեք հարյուր քառասունութ հազար երեք հարյուր/ներառյալ ԱԱՀ-ն:[17] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ___ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը

---

[17] Եթե Վաճառողի կողմից գնայինառաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս ներառյալ ԱԱՀ-ն բառերը հանվում են:

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

---

[20] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[21] Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:.

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Ճամբարակի ԱԿ>> ՓԲԸ	<<Գլոբմեդ>> ՍՊԸ
ք.Ճամբարակ, Տիգրան Մեծի 17	ք. Երևան, Բրյուսովի 21$_2$., բն.57
<< ՎՏԲ Հայաստան բանկ>> ՓԲԸ	<< ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ
Ճամբարակ մ/ճ	բանկ >> ՓԲԸ
Հ/Հ 16023012502500,ՀՎՀՀ 08617165	Հ/Հ 220533330431000
Էլ.փոստ:chambarak@bk.ru	ՀՎՀՀ 02643743
Տնօրեն Ա.Մելքումյան	Էլ. հասցե info@glob-med.am
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել գործունեությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«19» «02» 2020 թ. կնքված ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01 •
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի								ՀՀ դրամ		
								մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	միավոր գին/ՀՀ դրամ	ընդհանուր գին/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
2	33211150 /1	Միզանյութի որոշման հավաքածու	Միզանյութի որոշման համար նախատեսված հավաքածու UREA՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ կինետիկ եղանակով:Տուփով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/: Մեկ տուփ ռեագենտի հավաքածույում թեստերի 100թեստ: Հավաքածուն ունի իր աշխատանքի համար անհրաժեշտօգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:	հատ	3500	17500	5	Ք.Ճամբարակ 5 կ. Տ. Մեծի 17	5	1-4 եռամսյակ ,բայց Ոչ շուտ, քան պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացուցային օրը
3	33211160 /1	Հավաքածու կրեատինինի համար	Կրեատինինի որոշման համար նախատեսված հավաքածու CREATININE՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ Ֆոտոմետրիկ կինետիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/, : չափման միավոր տուփ: Մեկ տուփ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը ոչ պակաս քան 100թեստ : Հավաքածուն ունի իր աշխատանքի համար անհրաժեշտօգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:	հատ	1800	9000	5	Ք.Ճամբարակ. Տ. Մեծի 17	5	1-4 եռամսյակ ,բայց Ոչ շուտ, քան պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացուցային օրը

4	33211300 /1	Կալցիումի որոշման հավաքածու	Կալցիումի որոշման համար նախատեսված հավաքածու Calcium՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ Ֆոտոմետրիկ կինետիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/:չափման միավոր՝ տուփ: Մեկ տուփ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը՝ ոչ պակաս քան 100թեստ: Հավաքածուն ունի իր աշխատանքի համար անհրաժեշտօգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:	հատ	2400	4800	2	Ք.Ճամբարակ. S. Մեծի 17	2	1-4 եռամսյակ ,բայց Ոչ շուտ, քան պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացուցային օրը
6	33211130 /1	Հավաքածու խոլեստերինի համար	Խոլեսթերինի որոշման համար նախատեսված հավաքածու CHOL՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ Ֆերմենտատիվ	հատ	2800	14000	5	Ք.Ճամբարակ. S. Մեծի 17	5	1-4 եռամսյակ ,բայց Ոչ շուտ, քան պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ

			կոլորոմետրիկ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա: *Չափման միավոր տուփ :Մեկ տուփ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը ոչ պակաս քան 100թեստ: Խոլեսթերինի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով* նախատեսված նյութերը (կալիբրատոր, ստանդարտ կամ այլ անհրաժեշտ նյութեր): Հավաքածուն ունի իր աշխատանքի համար անհրաժեշտօգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:							մտնելու օրվանից հաշված 2-րդ օրացուցային օրը
14	33211320 /3	Հեպատիտ C	Հեպատիտ C որոշման թեստ-հավաքածու: Մեթոդ՝ (*Ստրիպային*, Հավաքածուն ունի իր աշխատանքի համար անհրաժեշտօգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:	հատ	160	16000	100	Ք.Ճամբարակ. S. Մեծի 17	100	1-4 եռամսյակ ,բայց Ոչ շուտ, քան պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացուցային օրը
15	33211120 /1	Գլյուկոզայի որոշման հավաքածու	Գլյուկոզայի որոշման համար նախատեսված հավաքածու GLUCOSE՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ Ֆերմենտատիվ կոլորոմետրիկ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/: չափման միավոր տուփ: Մեկ տուփ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը (ոչ պակաս քան 100թեստ : Հավաքածուն ունի իր աշխատանքի համար անհրաժեշտօգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:	հատ	1600	12800	8	Ք.Ճամբարակ. S. Մեծի 17	8	1-4 եռամսյակ ,բայց Ոչ շուտ, քան պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացուցային օրը
19	33211340 /2	Հեմոգլոբինի որոշման թեստ հավաքածու	Հեմոգլոբին որոշման համար նախատեսված հավաքածու Hemoglobin՝ նախատեսված բաց համակարգի համար: կոլորոմետրիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/:չափման միավոր տուփ՝ 1 տուփ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը ոչ պակաս քան 100թեստ	հատ	1600	8000	5	Ք.Ճամբարակ. S. Մեծի 17	5	1-4 եռամսյակ ,բայց Ոչ շուտ, քան պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացուցային օրը

			Հեմոգլոբինի հավաքածուն պետք է Հավաքածուն ունի իր աշխատանքի համար անհրաժեշտօգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:							
20	33691160 /1	Մեզի անալիզի թեսթ	Ախտորոշող թեստ ստրիպային համակարգ՝ ոչ պակաս քան 10 պարամետր, բիոքիմիական անալիզի համար: Մեզի մեջ ուրոբիլինոգենի, գլյուկոզի, բիլիրուբինի, կետոնների, տեսակարար կշռի,արյան,pH, սպիտակուցի, նիտրիտների, լեյկոցիտների և այլ որոշման թեսթ-ստրիպների հավաքածու: չափման միավոր հասկանալ տուփ՝1 տուփում 100թեստ, : Հավաքածուն ունի իր աշխատանքի համար անհրաժեշտօգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:	հատ	6400	96000	15	Ք.Ճամբարակ. S. Մեծի 17	15	1-4 եռամսյակ ,բայց Ոչ շուտ, քան պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացուցային օրը
27	33141100 /1	Ծայրաղիր մեծ	Ծայրաղիր մեծ՝ բիոքիմիական անալիզների համար:Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում, Հավաքածուն ունի իր աշխատանքի համար անհրաժեշտօգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:	հատ	5	5000	1000	Ք.Ճամբարակ. S. Մեծի 17	1000	1-4 եռամսյակ ,բայց Ոչ շուտ, քան պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացուցային օրը
29	33191310 /2	Արյունահավաք անոթ բիոքիմիայի համար EDTA	Արյունահավաք անոթ բիոքիմիայի համար Հավաքածուն ունի իր աշխատանքի համար անհրաժեշտօգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:	հատ	70	140000	2000	Ք.Ճամբարակ. S. Մեծի 17	2000	1-4 եռամսյակ ,բայց Ոչ շուտ, քան պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացուցային օրը
33	33211410 /1	Ասպարտամինոտրանսֆերազայի հավաքածու /AST/	Ասպարտամինոտրանսֆերազայի /AST/ որոշման թեսթ հավաքածու: չափման միավոր տուփ:Ֆորմատ՝ 100թեսթ:Ստուգվող նմուշ: արյան շիճուկ/պլազմա: Հավաքածուն ունի իր աշխատանքի համար	հատ	3600	10800	3	Ք.Ճամբարակ. S. Մեծի 17	3	1-4 եռամսյակ ,բայց Ոչ շուտ, քան պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացուցային օրը

			անհրաժեշտօգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:							
34	33211420 /1	Ալանինամինոտրանսֆերազայի հավաքածու /ALT/	Ալանինամինոտրանսֆերազայի որոշման թեսթ հավաքածու:չափման միավոր տուփ:1 տուփում 100թեսթ:Ստուգվող նմուշ: արյան շիճուկ/պլազմա: Հավաքածուն ունի իր աշխատանքի համար անհրաժեշտօգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:	հատ	3600	10800	3	Ք.Ճամբարակ. S. Մեծի 17	3	1-4 եռամսյակ ,բայց Ոչ շուտ, քան պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացուցային օրը
49	38591200 /1	Ծայրադիրների շտատիվ/մեծ ծայրադիրների համար/	Ծայրադիրների շտատիվ, Հավաքածուն ունի իր աշխատանքի համար անհրաժեշտօգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:	հատ	3600	3600	1	Ք.Ճամբարակ. S. Մեծի 17	1	1-4 եռամսյակ ,բայց Ոչ շուտ, քան պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացուցային օրը

** *Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ԳՆՈՐԴ

<<Ճամբարակի ԱԿ>> ՓԲԸ
ք.Ճամբարակ, Տիգրան Մեծի 17
<< ՎՏԲ Հայաստան բանկ>> ՓԲԸ
Ճամբարակ մ/ճ
հ/հ 16023012502500,ՀՎՀՀ
08617165
էլ.փոստ:chambarak@bk.ru
Տնօրեն Ա.Մելքումյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Գլոբմեդ>> ՍՊԸ
ք. Երևան, Բրյուսովի 21հ., բն.57
<< ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ
բանկ >> ՓԲԸ
հ/հ 220533330431000
ՀՎՀՀ 02643743
էլ. հասցե info@glob-med.am

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N
« 19 » <<02> 2020 թ. կնքված ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/01 *
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**										
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	33211150 /1	Միզանյութի որոշման հավաքածու	4375	8750	8750	8750	13125	13125	13125	7500	17500	17500	17500
3	33211160 /1	Հավաքածու կրեատինինի համար	2250	4500	4500	4500	6750	6750	6750	9000	9000	9000	9000
4	33211300 /1	Կալցիումի որոշման հավաքածու	1200	2400	2400	2400	3600	3600	3600	4800	4800	4800	4800
6	33211130 /1	Հավաքածու խոլեստերինի համար	3500	7000	7000	7000	10500	10500	10500	14000	14000	14000	14000
14	33211320 /3	Հեպատիտ C	4000	8000	8000	8000	12000	12000	12000	16000	16000	16000	16000
15	33211120 /1	Գլյուկոզայի որոշման հավաքածու	3200	6400	6400	6400	9600	9600	9600	12800	12800	12800	12800
19	33211340 /2	Հեմոգլոբինի որոշման թեստ հավաքածու	2000	4000	4000	4000	6000	6000	6000	8000	8000	8000	8000
20	33691160 /1	Մեզի անալիզի թեստ	24000	48000	48000	48000	72000	72000	72000	96000	96000	96000	96000

27	33141100 /1	Ծայրաղիր մեծ	1250	2500	2500	2500	3750	3750	3750	5000	5000	5000	5000
29	33191310 /2	Արյունահավաք անոթ բիոքիմիայի համար EDTA	35000	70000	70000	70000	105000	105000	105000	140000	140000	140000	140000
33	33211410 /1	Ասպարտամինոտրանսֆերազայի հավաքածու /AST/	2700	5400	5400	5400	8100	8100	8100	10800	10800	10800	10800
34	33211420 /1	Ալանինամինոտրանսֆերազայի հավաքածու /ALT/	2700	5400	5400	5400	8100	8100	8100	10800	10800	10800	10800
49	38591200 /1	Ծայրաղիրների շտատիվ/մեծ ծայրաղիրների համար/	900	1800	1800	1800	2700	2700	2700	3600	3600	3600	3600

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն համանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

" հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

<<Ճամբարակի ԱԿ>> ՓԲԸ
ք.Ճամբարակ, Տիգրան Մեծի 17
<< ՎՏԲ Հայաստան բանկ>> ՓԲԸ
Ճամբարակ մ/ճ
Հ/Հ 16023012502500,ՀՎՀՀ 08617165
էլ.փոստ:chambarak@bk.ru
Տնօրեն՝ Ա.Մելքումյան

ստորագրություն՝
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Գլոբմեդ>> ՍՊԸ
ք. Երևան, Բրյուսովի 21շ., բն.57
<< ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ >> ՓԲԸ
Հ/Հ 220533330431000
ՀՎՀՀ 02643743
էլ. հասցե՝ info@glob-med.am

ստորագրություն՝
Կ.Տ